# ԱՆՑՈՐԴԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ

## (ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՑՈՒՇԱՏԵՏՐԻՑ)

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ՉԱՐԵԱՆ

### ԼԵՆԻՆԸ ՄԵՌԵԼ Ա...

1.

Երէկ գիշեր պատուհանիս՝ խմորով կըպցրած թղթերի վրայ յունուարը մղկտում էր։

Թէյս պաղել էր։ Ոտքերս, վերմակի մէջ փաթաթուած, նստել էին սահնակ եւ երեւակայական մի Սիբերիայում, ուր փայլուն եղջիւրների վրայ ձիւն էր մաղում, անյայտ ճամբաներ էին անցնում։

Քանհինդ մոմնոց ելեքտրական լամպարը, ձեղունի բարձունքից, ճպռոտ իր աչքը յառել էր թանձր շուքերի վրայ եւ բարակ իր թելերի միջից կայծկլտուն անհանգստութիւն էր տարածում։

Գուցէ մի քիչ լոյս լինէր։

Երեւանի ելեքտրակայանը ծեր է եւ թուլամարմին։ Իր երակների արիւնը չափուած եւ հաշուած է։ Եթէ, օրինակի համար, այնտեղ վերը, Նորքի ստորոտում, քամիների մէջ նստած քառակուսի հիւանդանոցի վիրաբուժական սենեակը լուսաւորեն ու, շտապ քայլերով, մտահոգ հիւանդապահներ շարժուեն օրհասական մի մարմնի շուրջը՝ մայրաքաղաքի բոլոր տները կլորոֆորմի տակ կը թմրին, լամպարները կը սկսին բաց-խփել եւ գիշերը կը սրսփի։

Երէկ գիշեր, անհանգիստ խաւարը դողդողում էր սեղանիս վրայ, կարճատես իր աչքերը կպցնում էր գրքերին, հայ գրերի մըրջիւնները կուտակում, յանկարծ վառում եւ նորից, կամաց-կամաց, մարում... Ջղայնացայ։

Գուժաբեր այդ մթնոլորտին համակերպելու համար, կոնակս տուի բազկաթոռին, աչքերս փակեցի եւ փորձում էի ներքին լռութիւն հաստատել, երբ նախասենեակում, քամին յանկարծ իր գլուխը զարկաւ դրան, եւ մէկը քայլեց։ Ետ դարձայ՝ անծանօթ մի մարդ էր։ Կարող էր պատահել, որ նոյնիսկ ծանօթ էլ լինէր։ Գուցէ մի տեղ տեսել էի կամ, ո՞վ է իմանում, գուցէ եւ չէի տեսել։

Երկայնահասակ, նիհար, ցանցառ միրուքով, մեծ փայլուն աչքերով։ Հայ իրականութեան մէջ մաշուած մտաւորականի տիպար, մինակեաց փիլիսոփայ, թէեւ տարօրինակ կերպով յիշեցնում էր ծանօթ իտալացի մի պատմաբան։ Անշուշտ նա չէր։ Նա չէր կարող լինել։ Մինչ ես, մի քիչ մտահոգ, դիտում էի անծանօթին, նա մի աթոռ առաւ, նստեց սեղանիս մօտ եւ շատ հանգիստ ձայնով ասաց։

— Դրսից լոյս տեսայ՝ մտայ։

Ասեց եւ մեծ ուշադրութեամբ սկսեց չորս կողմը նայել։

Նայում էր, ու սենեակս քանի գնում կարծես մեծանում էր։ Պատերը աննշմարելի կերպով հեռանում էին։ Դեղնած, կտոր կտոր ընկած թղթերը, որոնց վրայ ժամանակին ծաղիկներ կային, վառվռուն գոյն էին առնում, կենդանանում եւ, այլեւս բաց տարածութեան մէջ, փոթորկալից մի երկնքի տակ, լերան վերայ վառուած խարոյկների պէս, քամիների շնչի հետ ծալւում էին ու գլուխները վեր հանած բռնկում։

Աչքերս վեր առի՝ ձեղունը անհետացել էր։ անհանգիստ ամպեր էին անցնում, կուտակւում, փուում։ Հորիզոնի վրայ զուգահեռական երեք կարմիր գծեր ալիքների նման տատանւում էին, յետոյ խառնւում, վեր ցցւում ու գրկում՝ արագօրէն վար իջնող ամպերին։

Ցունուարը շարունակում էր մղկտալ։ Շրթնքներիս կպցրած թէյը սառն էր։ Թղթերը, չորցած ոսկորների նման, պատուհանի վրայ ճայթում էին։

Մարդը, տարօրինակ կերպով հանգիստ, մեքենաբար մի գիրք առաւ ձեռքը, խաղաղ աչքերով նայեց, յետոյ փակեց, դրաւ սեղանի

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան